



Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ - ՄՈՆԹՐԷԱԼ
UNION GÉNÉRALE SPORTIVE ARMÉNIENNE (HOMENETMEN-GAMK) INC.
ARMENIAN GENERAL SPORTS UNION (HOMENETMEN-GAMK) INC.

3401 Olivar-Asselin, Montréal (Québec) H4J 1L5 ▶ T. 514 331-1872 ▶ hmemmontreal@gmail.com

Հ.Մ.Ը.Մ. Կամք Մոնթրեալի Կառույցը

Հ.Մ.Ը.Մ.-Կամք Մոնթրեալի մասնաճիւղը հիմնուած է 50 տարիներ առաջ 1958 թուին:

Մասնաճիւղը իր փոքրաթիւ անդամներով եղած է առաջնորդը հայապահմանման եւ հայացի դաստիարակութեան:

Տարիներու յարատեւ աշխատանքներով հասցուցած է տիպար միութենականներ որոնք վառ պահելով ջահը փոխանցած են զայն սերունդէն սերունդ: Միշտ ի մտի ունենալով Հ.Մ.Ը.Մ.-ի նշանաբանը «Բարձրացրէ Բարձրացուր» անոնք ճիգ թափած են բարձրանալու եւ բարձր պահելու միութիւնը:

Տարիներու ընթացքին ընդունելով նոր անդամներ տարբեր քաղաքներէ, մասնաճիւղը հասած է եր ներկայ վիճակին: Ինչմէս անցեալին ներկայիս նոյն պէս մասնաճիւղը կը շարունակէ իր աշխատանքները անմատ պահելու փոխանցուած ջահը:

Մասնաճիւղը ունի աւելի քան 868 անդամներ ինչ որ կը դասէ առաջին բազմանդամ միութիւնը Քանատայի գաղութէն ներս: Որպէս վարիչներ մասնաճիւղը ունի իր վարչութիւնը որուն կողքին կան նաեւ մարզական եւ սկաուտական խորհուրդները:

2008-2009 տարեշրջանի վարչութիւնը կը բաղկանայ 7 անդամներէ եղբ. Ռիչարտ Մելքոնեան, եղբ. Ռաֆֆի Հատիտեան, եղբ. Արմէն Զոպոյեան, եղբ. Շորճ Պալլոզեան, եղբ. Յարութ Մեսրոպեան, եղբ. Գէորգ Պիլէմնեան եւ քոյր Քրիսթին Սահակեան: Մարզական խորհուրդը 5 անդամներէ եղբ. Վահէ Թաշնեան, եղբ. Մարտիկ Գաթարոյեան, եղբ. Հենրի Ամիրեան, եղբ. Տիգրան Եօթնաղբայրեան, եղբ. Կարօ Գունտագնեան: Սկաուտ խորհուրդը 9 անդամներէ եղբ. Լէօն Արապեան, եղբ. Արա Էկոյեան, եղբ. Վահան Բանիկեան, քոյր Արշօ Դարձակեան, եղբ. Արթօ Պասմանեան, քոյր Մարալ Գաթարոյեան, քոյր Հուրիկ Լիպարեան, քոյր Լիզա Բարաղամեան, քոյր Լենա Մինասեան: որոնք ռեւէ մէկ ճիգ չեն խնայեր ընդլայնելու եւ բարելաւելու մասնաճիւղիս գործունէութիւնը:

Սկաուտական բաղանքին մէջ մասնաճիւղը ունի աւելի քան 277 քոյրեր եւ եղբայրներ: Աղջկանց բաղանքը կը բաղկանայ արծուիկներու, Արեւուշներու եւ Պարմանուհիներու խումբերէ. իսկ տղոցը երկսեռ Մոկլիի վոհմակ, Երկսեռ շրջուն Գալլիկներու արիներու եւ երէցներու խումբերէ: Վերոյիշեալ խումբերը կ'առաջնորդուին խմբապետական կազմի կողմէ, որը կը բաղկանայ 40 քոյր եղբայրներէ, իսկ մասնաճիւղի տղոց բաժնի խմբապետն է եղբ. Էրիք Արապեան իսկ աջկանց բաժնի խմբապետուհին է քոյր Ռուբինա Էքմէքնեան:

Մարզական գետնի վրայ մասնաճիւղը ունի մօտ 300 մարզիկ մարզիկուհիներ որոնցմէ 154-ը միժամանակ մաս կը կազմեն սկաուտական շարքերուն: 7 զանազան

Տեսակի մարզաձեւերուն մէջ Պասկէթպոլ, Ոսոնագնդակ, Ոլի պոլ, Ֆլոր հագի, Սեղանի թենիս, Ճատրակ եւ Աթլէթիզմ. կան տարբեր մակարթակի խումբեր:

Պասկէթպոլի մարզաձեւի մէջ մասնաճիւղը ունի 2 աղջկանց եւ 5 տղոց խումբեր, Ոսոնագնդակի 3 աղջկանց եւ 11 տղոց խումբեր. Ֆլոր հագիի 2 տղոց խումբեր. Ճատրակի եւ Սեղանի Թէնիսի երկսեռ խումբեր եւ ի վերջոյ ունինք Աթլէթիզմի բաժինը ուր իրենց մասնակցութիւնը կը բերեն աւելի քան 40 քոյրեր եւ եղբայրներ:

Մասնաճիւղը իր սկաուտական եւ մարզական կազմերէն անկախ ունի շքեղ Ֆանֆար մը:

Այս բոլորին կողքին մասնաճիւղը նոյնպէս հպարտ է իր մօտ 250 անդամներով որոնք մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.-Կամք Մոնթրէալի ընտանիքին եւ որոնք միշտ երկար կը պահեն իրենց օժանդակ ձեռքերը:

Հ.Մ.Ը.Մ.-Կամք Վարչութիւն՝